ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.4/58452-2019

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի (Պ-364-13.11.2019-ՖՎ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի դեկտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1850 - Ա որոշումը:

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Զ. Դավեյան

Հեռ. 515685

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-364-13.11.2019-ՖՎ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ:

Նախագծով առաջարկվում է բանկային ավանդի համար տոկոսները վճարել ինչպես ներդրման օրվա, այնպես էլ վերադարձման օրվա համար: Ներկայացված առաջարկությունն ընդունելի է մասամբ:

Այսպես, միջօրյա (overnight) ավանդ կնքելու հնարավորություն ստեղծելու նպատակով նպատակահարմար ենք համարում բանկային ավանդի համար տոկոսների հաշվարկն ավանդի ներդրման օրվանից սկսած, սակայն ոչ ավանդի մարման օրը:

Տվյալ մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ավանդի մարման օրը բանկն ավանդի միջոցներն օգտագործելու հնարավորություն չունի: Ինչպես ներգրավված ավանդի գումարը, այնպես էլ հավելագրված տոկոսներն ավանդի մարման օրը կանխիկ կերպով պահվում են դրամարկղում, որպեսզի բանկը հաճախորդի պահանջի դեպքում նրան վերադարձնի գումարը: Հետևաբար՝ արդարացված չէ մարման օրը բանկի կողմից չօգտագործվող միջոցների համար տոկոսագումարների վճարումը:

Բացի դրանից, առաջարկում ենք օրենքի նախագծում «հավելագրում» բառը փոխարինել «հաշվարկվում» բառով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշակի դեպքերում հնարավոր է նաև բացասական տոկոսով ավանդի տրամադրում, ինչը լայնորեն կիրառվում է արտասահմանում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 դեկտեմբերի 2019 թվականի N 1850 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ներսես Երիցյանին (համաձայնությամբ) նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը (Պ-364-13.11.2019-ՖՎ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. դեկտեմբերի 11

Երևան

ՆԱԽԱԳԻԾ
Պ-364-13.11.2019-ՖՎ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-239 Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 907-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Բանկային ավանդի գումարի վրա տոկոսները հավելագրվում են ավանդը բանկ մուտք լինելու օրվանից մինչեւ այն ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրն ընկած ժամանակահատվածում օրացուցային օրերի համար:»:

Հոդված 2. Օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ամբողջ աշխարհում ընդունված է, որ ավանդների համար տոկոսները հաշվեգրվում են ավանդի ժամկետի փաստացի օրերի հաշվարկով, այնինչ գործող օրենսդրական ձեւակերպումների համաձայն ցանկացած ժամկետով ավանդ ներդնելու դեպքում չի վճարվում մեկ օրվա տոկոսը, քանի որ տոկոսների հաշվեգրումը սկսվում է ավանդը բանկ մուտք լինելու հաջորդ օրվանից մինչեւ այն ավանդատուին վերադարձնելու նախորդ օրը: Այսինքն՝ մեկ օրով ավանդ դնելու դեպքում բանկն ընդհանրապես տոկոս չի վճարում, ինչը հակասում է ավանդ գործիքի տնտեսագիտական բովանդակությանը:

Առկա կարգավորումը խոչընդոտում է նաեւ փողի շուկայի զարգացմանը, որի համար անհրաժեշտ է ունենալ օվերնայթ (մեկ օրանոց) ավանդի շուկայական տոկոսադրույքը: Այն թույլ չի տալիս ներդնել նաեւ ավանդային հավաստագրերի ֆինանսական գործիքը, որը բավական տարածված է աշխարհում:

Գործող կարգավորումների արդյունքում բանկերը 2019 թվականի առաջին 6 ամիսների կտրվածքով ավանդատուներին պակաս են վճարել 162 միլիոն ՀՀ դրամ տոկոսավճար:

Առաջարկվող փոփոխությունների արդյունքում ավանդատուները կսկսեն ստանալ իրենց ավանդների փաստացի օրերի չափով տոկոսավճար, ինչպես նաեւ կվերանան տոկոսագումարների սխալ հաշվարկի արդյունքում ֆինանսական շուկայի զրգացման խոչընդոտները: